բիս ամաւ, զի դու Տեառն Պետրոս բերթաձո-
բոյ յիշխեսցես 'ի վերայ ամենայն վառհոդ յո-
բինող արհեստաւորաց և զգուշութեամբ արբունս
հասուցանիցես լաւագոյն և յստակ վառհոդ և
որոնես հնարս, որ կալով մնասցէ երկայն աւուրս,
և մի՛ աւերեսցի շտապ, և 'ի յօրինելն վառհոդի
մի՛ գտցի մի տեղի զուռին և միւս տեղին մեղմ
եթէ ոչ համահաւասար կարողութեամբ, և բոլոր
աշխարհն հայաստանեաց պարտ է յօրինել ամե-
նայն վառհոդս երկուս տեսակս մի խոշոր վասն
թօփի, մի մանր վասն աղզութի և զօրութեամբ
նոյն երկու տեսակաւ ոչ յաւելի կամ պակաս,
և տուաք իշխանութիւն քեզ որոնել և ստանալ
արհեստաւորս և 'ի ծախիւ տանն հայոց, լուս
ածել զամենայն զոր ինչ որ գտցի առ 'ի առա-
ւել լաւութեան վառհոդի և հաստատութիւն մնա-
լոյ անշիջանելի փիլթայն եթէ ժամանակի տա-
պու և կամ 'ի ժամանակի թոռութեան ցօղի և
անձրևի և ամենայն զօրութենէ ջանալով ջա-
նասցես արհեստս ապահով մնալոյ վառհոդն եթէ
մէջ քաղաքաց և կամ 'ի դաշտի և կամ մէջ բա-
նակի խմբից, գրուեցաւ և այլն։

Վկայեմք, որ ձեռնա-
դրեցին, կնքեցին և յան-
ձնեցին.

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○

Մ. Ի. ○
Մ. Գ. ○